**Հավելված 4**
**«ՍՀՀ-ԷԱՃԱՊՁԲ-18/2» ծածկագրով**
**էլեկտրոնային աճուրդի հրավերի**

# ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
# N ՍՀՀ-ԷԱՃԱՊՁԲ-18/2-1

ք.Երևան ____/___________/2018թ.

Սևանի հոգեբուժական հիվանդանոց ՓԲԸ-ը ի դեմս Գագիկ Հրանտի Կարապետյան-ի, որը գործում է Սևանի հոգեբուժական հիվանդանոց ՓԲԸ -ի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և Ռասսի ՍՊԸ-ը, ի դեմս տնօրեն Հմայակ Գևորգյան-ի, որը գործում է Ռասսի ՍՊԸ-ի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

## 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

## 2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**2.1 Գնորդն իրավունք ունի՝**

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 3 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

Digitally signed by GEVORGYAN HMAYAK 3201850365 Date: 2018.09.26 16:06:26

Digitally signed by KARAPETYAN GAGIK 2201590044 Date: 2018.09.27 14:01:21 AMST

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝
ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.
բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.
գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:
2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:
2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:
2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.
2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝
ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.
բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 3 օրից ավելի,
2.1.8 Զննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:
**2.2 Գնորդը պարտավոր է՝**
2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:
2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:
2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:
2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:
2.2.5 Պայմանագրի 2.3.4 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

**2.3 Վաճառողն իրավունք ունի՝**

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.4 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.4.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.5 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

**2.4 Վաճառողը պարտավոր է՝**

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

### 3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 11756650.00 (տասնմեկ միլիոն յոթ հարյուր հիսունվեց հազար վեց հարյուր հիսուն ) ՀՀ դրամ : Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:
3.3 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

## 4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված պրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:
4.2 Հիմնական միջոց հանդիսացող ապրանքների համար երաշխիքային ժամկետ է սահմանվում Գնորդի կողմից ապրանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 365 օրացուցային օրը: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել մատակարարված ապրանքի թերություններ, ապա Վաճառողը պարտավոր է իր հաշվին, Գնորդի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները :

## 5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:
Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների ARMEPS համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ուղեցույցներ, ձեռնարկներ» ենթաբաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):
5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 3 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների ARMEPS համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:
5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման

արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների ARMEPS համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների ARMEPS համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

## 6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտովորությունները լրիվ կատարելուց:

## 7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով

պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Գնորդի կողմից այն ստորագրելու պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը[1]:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նպատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Եթե պայմանագիրն իրականացվում է գործակալության պայմանագիր կնքելու

միջոցով.
1) Վաճառողը պատասխանատվություն է կրում գործակալի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար.
8.8 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:
8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:
Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:
8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:
8.11 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:
8.12 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:
8.13 Պայմանագիրը կազմված է __ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:
8.14 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է

Հայաստանի Հանրապետության իրավունքը։

---

[1]Պետական բյուջեի միջոցների հաշվին պարտավորություններ չառաջացնող գնումների դեպքում սույն նախադասությունը պայմանագրից հանվում է:

**10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները**

| ԳՆՈՐԴ | ՎԱՃԱՌՈՂ |
| --- | --- |
| **Սևանի հոգեբուժական հիվանդանոց ՓԲԸ** | **Ռասսի ՍՊԸ** |
| **Հասցե՝ ք. Սևան, Կարմիր բանակի 68** | **Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Լեռ Կամսարի 8/3** |
| **Հայէկոնոմբանկ ԲԲԸ Սևանի մասնաճյուղ** | **Ամերիաբանկ ՓԲԸ** |
| **163148133255** | **1570003002830100** |
| **08601459** | **00071397** |
| **Գագիկ Հրանտի Կարապետյան** | **Հմայակ Գևորգյան** |
| ___________ | ___________ |
| **/ստորագրություն/** | **/ստորագրություն/** |
| **Կ.Տ** | **Կ.Տ** |

Հավելված N 1
____/____________/2018թ. կնքված
ՍՀՀ-ԷԱՃԱՊՁԲ-18/2 ծածկագրով պայմանագրի

# ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ապրանքի | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը` ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | տեխնիկական բնութագիրը | չափման միավորը | միավոր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր քանակը | մատակարարման | | |
| | | | | | | | | հասցեն | ենթակա քանակը | Ժամկետը |
| 2 | 39511170/3 | բարձերեսներ | Բամբակյա բարձի երեսգործվածքը 100% բամբակյա, պատրաստի արտադրանքի չափսերը (70 x 70) սմ: 1մ2 մա | հատ | 495.00 | 118800.00 | 240 | ք. Սևան Կարմիր Բանակի 68 | 240 | 2018 թվականի հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | կերեսային խտությունը 180 գր: Գործվածքի գծային չափսերի փոփոխությունը թաց մշակումից հետո չպետք է գերազանցի մինուս 5%: Պատրաստի արտադրանքի դետալների ձևվածքը պետք է իրականացվի հենքային թելերի ուղղությամբ: Արտադրանքի տեսքը՝ համաձայն հաստատված նմուշի: Փաթեթավո | | | | | | |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | րումը` եռաշերտ ստվարաթղթե արկղերով, արկղերի մեջ 70 հատ, տեսականին պոլիէթիլենային թափանցիկ պարկերով, մեկ պարկի մեջ` 10 հատ։ Արկղերը` պիտակավորված, պիտակների վրա պետք է նշված լինի տեսականու անվանումը, քանակը, չափսերը, արտադրող կազմակերպության անվանումը, | | | | | | | |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | արտադրմա ն տարեթիվը, լվացման ձևը և քաշը Կցված է [6634d5e6.pdf](6634d5e6.pdf) | | | | | | | |
| 3 | 39514500/2 | երեսի սրբիչներ | Սրբիչը խավավոր է 100% բամբակ բա ղադրությա մբ: Գործվածքի 1մ2 մակերե սային խտությունը 610 գրամ, գործված երկու թելով: Սրբիչի չորս եզրերը ծալված զա րդակարվա ծ: Գործվածքի խզման ծան | հատ | 990.00 | 386100.00 | 390 | հասցեն | ենթակա քանակը | Ժամկետը |
| | | | | | | | | ք. Սևան Կարմիր Բանակի 68 | 390 | 2018 թվական հ ոկտեմբեր- նոյեմբեր ամիսներին |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | ռաբեռնված ությունը՝ հենքով 211 Ն (22 կգս), իսկ միջնաթ ելով՝ 282 Ն (29կգս): Գործվածքի կաթիլայնու թյունը՝ 80 մմ 30 րոպեում: Ջ րակլանողա կանություն ը 300%՝ 10 րոպեում: Պ ատրաստի արտադրան քի չափսերը 92 x 52 սմ, շեղումները ըստ ԳՈՍՏ-ի: Փաթեթա վորումը՝ եռաշերտ ս տվարաթղթ ե արկղերով, | | | | | | |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | արկղերի մեջ 50 հատ, տեսականին պոլիէթիլենային թափանցիկ պարկերով, մեկ պարկի մեջ` 10 հատ։ Արկղերը` պիտակավորված, պիտակների վրա պետք է նշված լինի տեսականու անվանումը, քանակը, չափսերը, արտադրող կազմակերպության անվանումը, արտադրման տարեթիվը Կցված է f6916893.p | | | | | | |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | df | | | | | | | |
| 4 | 39514100/2 | սրբիչներ, բամբակյա | Լոգարանի սրբիչ:Սրբիչը խավավոր է 100% բամբակ բաղադրությամբ: Գործվածքի 1մ2 մակերեսային խտությունը 610 գրամ, գործված երկու թելով: Սրբիչի չորս եզրերը ծալված զարդակարված: Գործվածքի խզման ծանրաբեռնվածությունը՝ հենքով 211 Ն (22 կգս), իսկ միջնաթելով՝ 282 Ն | հատ | 1890.00 | 737100.00 | 390 | հասցեն | ենթակա քանակը | Ժամկետը |
| | | | | | | | | ք. Սևան Կարմիր Բանակի 68 | 390 | 2018 թվական հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | (29կգս): Գործվածքի կաթիլայնությունը` 80 մմ 30 րոպեում: Ջրակլանողականությունը 300%` 10 րոպեում: Պատրաստի արտադրանքի չափսերը 142 x 72սմ, շեղումները ըստ ԳՈՍՏ-ի: Փաթեթավորումը` եռաշերտ ստվարաթղթե արկղերով, արկղերի մեջ 30 հատ, տեսականին պոլիէթիլենային թափանցիկ | | | | | | |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | պարկերով, մեկ պարկի մեջ՝ 5 հատ։ Արկղերը՝ պիտակավորված, պիտակների վրա պետք է նշված լինի տեսականու անվանումը, քանակը, չափսերը, արտադրող կազմակերպության անվանումը, արտադրման տարեթիվը։ Մատակարարը պետք է ապահովի առնվազն 5 տեսակի նմուշներ՝ ընտրություն կատարելու | | | | | | |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | համար Կցված է 62b9d007.pdf | | | | | | | | |
| 5 | 39514200/2 | խոհանոցի սրբիչներ | Արտադրատեսակը 100% բամբակյա մանվածքից, վաֆլենման 40 սմ-ից ոչ պակաս լայնությամբ, 80 սմ երկարությամբ: Քաշը 1մ2 մակերեսային խտությունը` 285գր: Խզման ծանրաբեռնվածությունը` հենքով 670 Ն (68 կգ/ս), իսկ միջնաթելով` 352 Ն (36 կգս): Ուղղորդիչ | հատ | 330.00 | 148500.00 | 450 | հասցեն | ենթակա քանակը | Ժամկետը | |
| | | | | | | | | ք. Սևան Կարմիր Բանակի 68 | 450 | 2018 թվական հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին | |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | տեխնիկական փաստաթուղթ՝ ԳՈՍՏ 11027-84: Արտաքին տեսքը՝ համաձայն հաստատված նմուշի: Փաթեթավորումը՝ եռաշերտ ստվարաթղթե արկղերով, արկղերի մեջ 50 հատ, տեսականին պոլիէթիլենային թափանցիկ պարկերով, մեկ պարկի մեջ՝ 10 հատ: Արկղերը՝ պիտակավորված, պիտա | | | | | | |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | կների վրա<br>պետք է<br>նշված լինի<br>տեսականո<br>ւ անվանում<br>ը, քանակը,<br>չափսերը,<br>արտադրող<br>կազմակեր<br>պության ա<br>նվանումը,<br>արտադրմա<br>ն<br>տարեթիվը<br>Կցված է<br>ed49f953.p<br>df | | | | | | |
| 6 | 39516122/2 | բարձ,<br>սինթետիկ | Պատրաստ<br>ի արտադր<br>անքի<br>չափսերը<br>(65X65) սմ,<br>քաշը` 2 կգ-<br>ից ոչ<br>պակաս:<br>Բարձը<br>լցոնած է սի<br>նտեպոնով,<br>երեսացուն | հատ | 2690.00 | 591800.00 | 220 | հասցեն \| ենթակա քանակը \| Ժամկետը<br>ք. Սևան Կարմիր Բանակի 68 \| 220 \| 2018 թվական հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին | |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | գործվածքը 80% բամբակյա և 20% պոլիէսթեր, մակերեսային խտությունը 275գ/մ2: Բարձի անկյուններից մեկում պետք է կարված լինի պիտակ, պիտակի վրա պետք է նշված լինի տեսականու անվանումը, չափսը, կազմակերպության անվանումը, արտադրման ամիսն ու տարեթիվը, | | | | | | |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | լվացման ձևը և քաշը Կցված է [2cd787db.pdf](2cd787db.pdf) | | | | | | |
| 7 | 18311170/2 | Ննջազգեստներ | Ննջազգեստ բայկայից /ձմեռային/։ Արտադրվում է 100% բամբակյա կտորից։ 1մ2 մակերեսային խտությունը 190-220 գրամ։ Շապիկ /երկարաթև/, վարտիք/երկարաճիտ,տաբատանման/: Փաթեթավորումը՝ եռաշերտ ստվարաթղթե արկղերով, արկղերի | հատ | 4489.00 | 1795600.00 | 400 | հասցեն / ենթակա քանակը / Ժամկետը<br>ք. Սևան Կարմիր Բանակի 68 / 400 / 2018 թվական հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին | |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | մեջ 20<br>հատ, տեսա<br>կանին պոլի<br>էթիլենային<br>թափանցիկ<br>պարկերով,<br>մեկ պարկի<br>մեջ` 5<br>հատ։<br>Արկղերը` պ<br>իտակավոր<br>ված, պիտա<br>կների վրա<br>պետք է<br>նշված լինի<br>տեսականո<br>ւ անվանում<br>ը, քանակը,<br>չափսերը,<br>արտադրող<br>կազմակեր<br>պության ա<br>նվանումը,<br>արտադրմա<br>ն<br>տարեթիվը<br>Կցված է<br>0e263664.p<br>df | | | | | | |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 8 | 18311190/2 | խալաթ | Խալաթ բայկայից /ծմեռային/: Արտադրվու մ է 100% բամբակյա կտորից: 1մ2 մակերե սային խտությունը 190-220 գրամ: Ուղիղ ձևվածքով կազմված է կենտրոնակ ան կոճկվող լանջափեշի ց, մեջքից, օձիքից և թևքերից: Կոճկվում է 5 հատ ջերմ ակայուն պլ աստմասայ ից կոճակնե րով: Առաջ ամասում մշակված | հատ | 4989.00 | 1247250.00 | 250 | հասցեն | ենթակա քանակը | Ժամկետը | |
| | | | | | | | | ք. Սևան Կարմիր Բանակի 68 | 250 | 2018 թվական հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին | |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | են վրադիր երկու կողքի գրպաններ։ Թևքերը նե րկարված, երկար երկկ արանի։ Օձիքը ծալովի։ Արտաքին տեսքը համաձայն հաստատվ ած նմուշի։ Խալաթի ներսի ձախ ակողմյան փեշին, գոտ կատեղի մասում պետք է ունենա տպ ագրական ներկով դրոշմ, դրոշմի վրա պետք է նշված լինի | | | | | | |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | տեսականու չափսը, արտադրող կազմակերպության անվանումը, լվացման ձևի նշումներ։ Փաթեթավորումը` հակերով, մեկ հակի մեջ 50 հատ, տեսականին պոլիէթիլենային թափանցիկ պարկերով, մեկ պարկի մեջ` 1հատ Կցված է c81c3d31.pdf | | | | | | | | |
| 9 | 18411200/3 | սպորտային հագուստ | Սպորտային հագուստ կանացի։ Սպորտային համազգե | հատ | 7940.00 | 1270400.00 | 160 | հասցեն<br>ք. Սևան Կարմիր Բանակի 68 | ենթակա քանակը<br>160 | Ժամկետը<br>2018 թվական հոկտեմբեր-նոյեմբեր | |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | ստ (բաղկացած բաճկոնակից և տաբատից) - արտաքին տեսքը համաձայն հաստատված նմուշի։ Բաճկոնակը փուլ լայկրա (трехнитка) սպորտային կտոր, բաղադրությունը 75% բամբակ, 25% էլաստոն, մակերեսային խտությունն 325 գ/մ2. Գծային չափսերի փոփոխությունը (նստվա | | | | | | | ամիսներին | |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | ծքը) 10<br>/տաս/<br>անգամյա<br>լվանալուց<br>հետո<br>չպետք է<br>գերազանցի<br>2-3%:<br>Բաճկոնը<br>բաղկացած<br>է լանջափեշ<br>երից որոնց<br>տակ<br>ներկարված<br>է շղթա,<br>մեջքից,<br>օձիքից և<br>թևքերից:<br>Բաճկոնը ա<br>ռաջամասի<br>ց կրկնակա<br>րվում է սոս<br>նձապատ գ<br>ործվածքով:<br>Տաբատը<br>ֆուլ լայկրա<br>(трехнитка)<br>սպորտային<br>կտոր, բաղ | | | | | | |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | ադրությունը 75% բամբակ, 25% էլաստոն, մակերեսային խտությունն 325 գ/մ2. Գծային չափերի փոփոխությունը (նստվածքը) 10 /տաս/ անգամյա լվանալուց հետո չպետք է գերազանցի 2-3%: Տաբատը կազմված է առաջամասերից և ետնամասից որոնք միացվում են կրկնակ | | | | | | |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
